ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2025 թվականի նոյեմբերի 11-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 11-ը)

Ես՝ Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ԿԿՀ) Հայտարարագրերի վերլուծության վարչության փորձագետ Աշխեն Քոչարյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները, որոնք, մասնավորապես՝ հետևյալն են.

ա) Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի և ԿԿՀ Հայտարարագերի վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործունեությունը կանոնակարգող, ինչպես նաև վերջինիս բնականոն աշխատանքների ապահովման ընթացակարգերից բխող ՀՀ օրենսդրության ուսումնասիրություն, բացի այդ, ԿԿՀ Էլեկտրոնային հարթակի, մասնավորապես՝ Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում բովանդակվող տվյալների շտեմարանի ուսումնասիրություն ու վերջինում ներառված համապատասխան տեղեկատվության կիրառում:

բ) ԿԿՀ Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքում ներկայացված Զեկուցագրերով արձանագրված անհամապատասխանությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Վարչության կողմից ամփոփ Տեղեկանքների պատրաստում:

գ) ԿԿՀ Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա ներկայացված Զեկուցագրերի ուսումնասիրության ու համապատասխան վերլուծության արդյունքում Վարչության կողմից ամփոփ Տեղեկանքների պատրաստում:

դ) Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր պահանջելու ու ստանալու նպատակով՝ Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու այլ անձանց, մասնավորապես՝ ՀՀ

արդարադատության նախարարություն, ՀՀ ներքին գործերի նախարարություն, ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ կենտրոնական բանկ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա և մի շարք ապահովագրական ընկերություններ համապատասխան հարցումների նախապատրաստման և <<Մալբերի>> էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկման գործընթացների իրականացում, ինչպես նաև վերոթվարկյալ մարմինների կողմից ստացված հարցումների պատասխանների հավաքագրում:

ե) Արխիվացման գործընթացն ապահովելու նպատակով՝ ավարտված վերլուծությունների ու ուսումնասիրությունների էլեկտրոնային հավաքագրում, փաստաթղթերի ստուգում, բացթողումների արձանագրում և սահմանված ձևաչափին համապատասխան փաստաթղթերի հաշվառում:

զ) Վարչության պետի հանձնարարությամբ սույն թվականի նոյեմբերի 21-ին մասնակցել եմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նիստին:

Հավելեմ նաև, որ սույն թվականի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 13-ը մասնակցել եմ <<Արտաքին ազդեցության գործողությունների հետաքննման և հակազդման վերաբերյալ>> վերտառությամբ թեմայով Դասընթացին՝ կազմակերպված Միջազգային համագործակցություն հանուն մարդու իրավունքների ոչ կառավարական կազմակերպության (IPHR) և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (DDF) կողմից:

Վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ նաև ընթացիկ այլ աշխատանքներ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Հայտարարագրերի վերլուծության վարչության
փորձագետ՝ Ա.Քոչարյան